



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՌՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը Ն Ա Ր Ա Ր Ա Ր Ա Ր Ա Ր Ա**

ԱՆԴԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան

11 սեպտեմբերի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Վ. Պողոսյանի
Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի
Ֆ. Թոխյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Սերյոժա Պողոսյանի անհապական դիմումով գործը
քննության ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Յ .

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝
քաղաքացի Սերյոժա Պողոսյանը 22.08.2012թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝
խնդրելով քննության առնել եւ որոշել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի
3-րդ մասի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասի,
8-րդ հոդվածի 1-ին մասի եւ 31-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին:

Անհապական դիմումի նախնական ուսումնասիրության արդյունքներով պարզվեց,
որ դիմումում բերված չեն անհրաժեշտ եւ բավարար իրավական փաստարկներ՝ վիճարկ-
վող իրավադրույթի ենթադրյալ հակասահմանադրականությունը հիմնավորելու համար,
իսկ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասն

ամրագրում է, որ անհափական դիմումը պեսք է պարունակի ՀՀ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ: ՀՀ սահմանադրական դադարանն իր՝ ՍԴՈ-839 որոշմամբ իրավական դիրքորոշում է արդահայպել «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասի վերաբերյալ՝ ամրագրելով, որ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պեսք է հիմնավորված լինի «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որեւէ հավելանիշով:

Նարկ է նշել նաև, որ դիմողը պարզած չի հիմնավորել իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փասդի եւ սահմանադրաբարավական վեճի առարկա հանդիսացող դրույթի միջեւ պարճառահետեւանքային կապի անմիջական առկայությունը, ինչն ըստ «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի եւ ՀՀ սահմանադրական դադարանի ՍԴՈ-839 որոշման՝ անհափական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է:

Միաժամանակ, դադարական կազմը գրնում է, որ դիմողը, ձեւականորեն վիճարկելով վերոհիշյալ նորմի սահմանադրականությունը, ըստ էության, բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց: Փաստորեն, դիմողը փորձել է դադարական ակտերի իրավական հետեւանքները վերագրել ինդրու առարկա իրավադրույթի սահմանադրականության խնդրին: ՀՀ սահմանադրական դադարանն իր՝ 2009թ. մարտի 17-ի ՍԴԱՈ-21 որոշմամբ արդահայպել է իրավական դիրքորոշում առ այն, որ բոլոր այն դեպքերում, եթե դիմողը, ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դադարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ:

Ելնելով վերոգրյալից եւ դեկավարվելով «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 32 եւ 69-րդ հոդվածների պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դադարանի թիվ 2 դադարական կազմը

ՈՐՈՇԵՅ.

Քաղաքացի Սերյոժա Պողոսյանի անհագրական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահով՝

Անդամներ՝



11 սեպտեմբերի 2012 թվականի
ՍԴԴԿՈ/2-15